# Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

# «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2025թ.

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 10 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 12 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Grant Thornton CJSC**
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկին

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

## Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Խմբի աուդիտը պլանավորում և իրականացնում ենք այնպես, որ ձեռք բերենք բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպությունների կամ բիզնես միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ որպես հիմք Խմբի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի նպատակով իրականացվող աշխատանքների ուղղորդման, հսկողության և վերանայման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

27 մարտի 2026թ.

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցումից հասույթ | 5 | 5,474,598 | 5,330,785 |
| Գովազդից և հովանավորչությունից հասույթ | 6 | 832,729 | 757,909 |
| Շնորհներից եկամուտ | 16 | 258,572 | 400,570 |
| Այլ եկամուտներ | 7 | 517,298 | 453,264 |
| Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր | 8 | (2,045,054) | (2,063,274) |
| Հեռարձակման ծախսեր | 9 | (456,415) | (398,744) |
| Հատուցում աշխատակիցներին | | (3,034,369) | (2,955,376) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (927,046) | (1,078,750) |
| Այլ ծախսեր | 10 | (745,636) | (679,568) |
| **Գործառնական գործունեությունից վնաս** | | **(125,323)** | **(233,184)** |
| | | | |
| Ֆինանսական եկամուտ | | 18,792 | 23,511 |
| Ֆինանսական ծախսեր | | (5,925) | (16,545) |
| Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս) | | (2,414) | 4,668 |
| **Վնաս մինչև հարկերը** | | **(114,870)** | **(221,550)** |
| | | | |
| Շահութահարկի գծով ծախս | 11 | (29,505) | (838) |
| **Տարվա վնաս** | | **(144,375)** | **(222,388)** |
| | | | |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **(144,375)** | **(222,388)** |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| ***Ակտիվներ*** | | | |
| ***Ոչ ընթացիկ ակտիվներ*** | | | |
| Հիմնական միջոցներ | 12 | 10,631,932 | 10,914,657 |
| Ոչ նյութական ակտիվներ | 13 | 461,312 | 507,147 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **11,093,244** | **11,421,804** |
| | | | |
| ***Ընթացիկ ակտիվներ*** | | | |
| Պաշարներ | | 60,491 | 61,607 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 14 | 506,702 | 567,414 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | 75,491 | 21,669 |
| Մնացորդներ բանկերում | | 564,312 | 259,366 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **1,206,996** | **910,056** |
| | | | |
| **Ընդամենը ակտիվներ** | | **12,300,240** | **12,331,860** |

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| ***Սեփական կապիտալ և պարտավորություններ*** | | | |
| ***Սեփական կապիտալ*** | 15 | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 2,391,107 | 2,391,107 |
| Պահուստային ֆոնդ | | 362,319 | 362,319 |
| Վերագնահատման պահուստ | | 5,603,775 | 5,603,775 |
| Էմիսիոն եկամուտ | | 755 | 755 |
| Կուտակված շահույթ | | 290,388 | 434,763 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **8,648,344** | **8,792,719** |
| | | | |
| ***Պարտավորություններ*** | | | |
| ***Ոչ ընթացիկ պարտավորություններ*** | | | |
| Վարկեր | | - | 87,500 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 16 | 1,561,917 | 1,469,226 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 17 | 1,020,539 | 1,055,009 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **2,582,456** | **2,611,735** |
| | | | |
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | | |
| Վարկեր | | - | 62,856 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 18 | 1,032,845 | 862,790 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | | 36,595 | 1,760 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **1,069,440** | **927,406** |
| | | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **12,300,240** | **12,331,860** |

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մարտի 27-ին.

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Աննա Սիրադեղյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Բաժնե-տիրական կապիտալ | Պահուս-տային կապիտալ | Վերագնա-հատման պահուստ | Էմիսիոն եկամուտ | Կուտակված շահույթ (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ | **2,391,107** | **356,319** | **5,603,775** | **755** | **934,009** | **9,285,965** |
| Տարվա վնաս | - | - | - | - | (222,388) | (222,388) |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **-** | **-** | **(222,388)** | **(222,388)** |
| Շահաբաժիններ | - | - | - | - | (270,858) | (270,858) |
| **Գործարքներ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **(270,858)** | **(270,858)** |
| Պահուստային ֆոնդի աճ | - | 6,000 | - | - | (6,000) | - |
| | | | | | | |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ** | **2,391,107** | **362,319** | **5,603,775** | **755** | **434,763** | **8,792,719** |
| Տարվա վնաս | - | - | - | - | (144,375) | (144,375) |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **-** | **-** | **(144,375)** | **(144,375)** |
| | | | | | | |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ** | **2,391,107** | **362,319** | **5,603,775** | **755** | **290,388** | **8,648,344** |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| ***Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր*** | | | |
| Տարվա շահույթ (վնաս) | | (144,375) | (222,388) |
| *Ճշգրտումներ՝* | | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | 1,217,601 | 1,456,364 |
| Հիմնական միջոցների արժեզրկում (հակադարձում) | | (6,275) | 6,275 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս | | 10,207 | - |
| Շնորհներից եկամուտ | | (258,572) | (400,570) |
| Ֆինանսական եկամուտ | | (18,792) | (23,511) |
| Ֆինանսական ծախսեր | | 5,925 | 16,545 |
| Շահութահարկի գծով ծախս | | 29,505 | 838 |
| Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ | 14 | 8,340 | - |
| Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս | | 2,414 | (4,668) |
| **Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները** | | **845,978** | **828,885** |
| | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | | 51,491 | (73,075) |
| Պաշարների փոփոխություն | | (3,889) | (15,634) |
| Այլ ակտիվների փոփոխություն | | (55,207) | (14,812) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | | 169,589 | 184,381 |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ** | | **1,007,962** | **909,745** |
| | | | |
| Ստացված շնորհներ | | 307,633 | 528,256 |
| Վճարված տոկոսներ | | (6,241) | (16,545) |
| Վճարված շահութահարկ | | (29,140) | (66,976) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | | **1,280,214** | **1,354,480** |

# Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| ***Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր*** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (847,537) | (1,244,566) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում | | 3,199 | 1,760 |
| Ստացված տոկոսային եկամուտ | | 18,792 | 23,510 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(825,546)** | **(1,219,296)** |
| | | | |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր*** | | | |
| Վարկերի և փոխառությունների ստացում (մարում) | | (150,000) | 40 |
| Վճարված շահաբաժիններ | | - | (270,858) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(150,000)** | **(270,818)** |
| | | | |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում) | | 304,668 | (135,634) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | | 278 | 908 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում | | 259,366 | 394,092 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում** | | **564,312** | **259,366** |

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

# 1 Գործառնությունների բնույթը

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների՝ «Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ և «Առաջին Ալիք Ամերիկա» Սի-Քորփորեյշն (միասին՝ Խումբ), գործունեությունը ներառում է հեռուստահաղորդումների պատրաստումը և հեռարձակումը՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն, գովազդն ու լրատվությունը:

# 2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») կառավարության 2001թ. հուլիսի 4-ի թիվ 592 որոշմամբ: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

«Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2020թ. օգոստոսի 18-ին, նրա իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

«Առաջին Ալիք Ամերիկա» Սի-Քորփորեյշնը հիմնադրվել է 2024թ. մարտի 27-ին, նրա իրավաբանական հասցեն է՝ ԱՄՆ,Կալիֆորնիա, Հյուսիսային Հոլիվուդ, 91605, Բաբքոք ավենյու 824:

Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկին:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 605 մարդ (2024թ.՝ 589 մարդ):

## Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

| Դուստր ընկերություններ | Մասնաբաժին % | Գրանցման երկիր | Հիմնական գործունեություն | Գրանցման ամսաթիվ |
|---|---|---|---|---|
| «Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ | 100 | Հայաստան | Գովազդ | 18 օգոստոսի 2020թ. |
| Առաջին Ալիք Ամերիկա Սի-Քորփորեյշն | 100 | ԱՄՆ | Լրատվություն | 27 մարտի 2024թ. |

## Համապատասխանություն և անընդհատություն

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

## Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Խմբի գործունեության վրա և արտացոլել է դա սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Խմբի համախմբված ֆինանսական վիճակի, արդյունքների և դրամական հոսքերի վրա:

# 3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

## 3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՄ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՖՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտին: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
  - ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
  - ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

  Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

  Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

  ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

  Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»* (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

# 4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

## 4.1 Պատրաստման հիմքերը

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի, որոնք չափվել են վերագնահատված արժեքով:

## 4.2 Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

## 4.3 Արժույթ

### Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 381.36 | 396.56 |
| ՀՀ դրամ/1 եվրո | 449.01 | 413.89 |

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

### Արտերկրյա ստորաբաժանումներ

Խմբի ֆինանսական հաշվետվություններում բոլոր ակտիվները, պարտավորությունները և Խմբի անդամ կազմակերպությունների ՀՀ դրամից բացի այլ գործառնական արտարժույթով (Խմբի ներկայացման արտարժույթ) կատարվող գործառնությունները համախմբման դեպքում փոխարկվում են ՀՀ դրամի: Խմբի անդամ կազմակերպությունների գործառնական արժույթը մնում է անփոփոխ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Համախմբման ժամանակ, ակտիվները և պարտավորությունները փոխարկվել են ՀՀ դրամի հաշվետու ամսաթվի փակման դրույքաչափով: Եկամուտները և ծախսերը փոխարկվել են Խմբի ներկայացման արտարժույթի հաշվետու ժամանակաշրջանի միջին դրույքաչափով: Փոխարկումից տարբերությունները ճանաչվել են տարվա շահույթում կամ վնասում:

Խմբի դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները փոխարկվել են կիրառելով ստորև արտացոլված փոխարժեքները.

| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տարեվերջի փոխարժեք | 381.36 | 396.56 |
| Միջին փոխարժեք | 387.01 | 391.59 |

## 4.4 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հաշվեկշռային արժեքն աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության և համատեղ ձեռնարկի շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում Խմբի շահաբաժինը ճանաչելու համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

Եթե Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հետ կապված կորուստների մեջ հավասար է կամ գերազանցում է իր սեփական բաժնեմասը այդ կազմակերպություններում, ներառյալ ցանկացած այլ չապահովված երկարաժամկետ դեբիտորական պարտքեր, Խումբը չի ճանաչում հետագա կորուստները, բացառությամբ այն դեպքերի, երբ նա չի ստանձնել պարտավորություններ կամ չի կատարել վճարումներ մեկ այլ կազմակերպության անունից:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների միջև գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասը բացառվում են Խմբի՝ այդ կազմակերպություններում բաժնեմասնակցության չափով: Երբ ակտիվի չկրած վնասը բացառվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման:

## 4.5 Հասույթ

Խմբի հասույթը ձևավորվում է հեռուստատեսային ատադրանքի հետ կապված ծառայությունների մատուցումից, գովազդային գործունեությունից և հովանավորչությունից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի որևէ պահի կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ (տե՛ս Ծանոթագրություն 18): Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

### Հովանավորչությունից հասույթ

Հովանավորչությունից հասույթը գոյանում է հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին տեղեկությունների տեղադրումից: Այն ճանաչվում է կնքված պայմանագրերի դրույթներից ելնելով՝ ծառայության փաստացի մատուցման պահին:

### Գովազդից հասույթ

Գովազդից հասույթն առաջանում է գովազդի տեղադրումից և ճանաչվում է կնքված պայմանագրերի համաձայն ծառայության փաստացի մատուցման պահին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է Խմբի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ:

Խմբի որոշ ոչ նյութական ակտիվների ճանաչման առանձնահատկությունները ներկայացված են ստորև.

### Լիցենզիաներ

Խմբի կողմից հաղորդումներ, ֆիլմեր և այլ ծրագրեր հեռարձակելու իրավունք տրամադրող լիցենզիոն պայմանագրերի կնքման արդյունքում առաջանում են ոչ նյութական ակտիվներ: Դրանք ճանաչվում են լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից:

### Ֆիլմեր, հաղորդումներ

Խմբի կողմից գնված ֆիլմերը և հաղորդումները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, եթե բավարարում են ոչ նյութական ակտիվի ճանաչման պահանջները:

### Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում հետևյալ կերպ.

- Ֆիլմերն ամորտիզացվում են 3-ից 10 տարվա ընթացքում՝ կախված դրանց յուրահատկություններից:
- Երգերի նկատմամբ բացառիկ իրավունքներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Ծրագրերի և ֆիլմերի գծով ստացված լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Հայ դասականների ստեղծագործությունների էկրանավորումները, Երևան ստուդիայի նյութերը (միակը Հանրապետությունում) և պատմական ֆիլմերը ամորտիզացվում են 30 տարվա ընթացքում:
- Սպորտային և այլ միջազգային միջոցառումների հեռարձակման գծով ստացված արտասահմանյան լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Համակարգչային ծրագրերն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:
- Ապրանքային նշաններն ամորտիզացվում են 10 տարվա ընթացքում:

Խմբի գործունեության առանձնահատկություններից ելնելով վերը նշված ամորտիզացիայի ժամկետները սահմանվում են այդ նպատակով ստեղծված Խմբի մասնագիտական հանձնաժողովի որոշումներով:

### Ընթացիկ հաղորդումներ

Հաշվի առնելով, որ Խմբի գործունեությունը հաղորդումների պատրաստումն ու եթեր հեռարձակումն է, հաղորդումների պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը ծախսագրվում են՝ դրանց կատարման ժամանակաշրջանում:

## 4.7 Հիմնական միջոցներ

Հողերը և շենքերը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատված հիմնական միջոցի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության

ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր և շինություններ | - 20-25 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | - 5-10 տարի |
| Տնտեսական գույք և այլ | - 1-5 տարի |
| Արտադրական գույք, գործիքներ | - 1-5 տարի |
| Հաշվողական և համակարգչային տեխնիկա | - 1-5 տարի |
| Արտադրական գույք մինչև 50,000 դրամ արժողությամբ | - 1 տարի |
| Այլ հիմնական միջոցներ (այդ թվում դեկորներ) | - 1-8 տարի |

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

## 4.8 Ֆինանսական գործիքներ

### Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

### Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտում կամ վնասում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

## Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

### Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, ավանդները բանկերում, առևտրային դեբիտորական պարտքերը:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ չունի:

### Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»:

ՖՀՄՍ 9-ին համապատասխան՝ Խումբը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով: Ակնկալվող պարտքային կորուստները դրամական պակասուրդների ներկա արժեքն են, որն իրենից ներկայացնում է պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը: Դրամական պակասուրդները զեղչվում են ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար):

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառման մանրամասն վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 23.2-ը:

## Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով ՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է): Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

## 4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

## 4.10 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

## 4.11 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Խմբի կանոնադրական նպատակների համար ստացված շնորհները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

## 4.12 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հաշվեկշռային արժեքն աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության և համատեղ ձեռնարկի շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում Խմբի շահաբաժինը ճանաչելու համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

Եթե Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հետ կապված կորուստների մեջ հավասար է կամ գերազանցում է իր սեփական բաժնեմասը այդ կազմակերպություններում, ներառյալ ցանկացած այլ չապահովված երկարաժամկետ դեբիտորական պարտքեր, Խումբը չի ճանաչում հետագա կորուստները, բացառությամբ այն դեպքերի, երբ նա չի ստանձնել պարտավորություններ կամ չի կատարել վճարումներ մեկ այլ կազմակերպպության անունից:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների միջև գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասը բացառվում են Խմբի՝ այդ կազմակերպություններում բաժնեմասնակցության չափով: Երբ ակտիվի չկրած վնասը բացառվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման:

## 4.13 Շահութահարկ

### Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

### Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

## 4.14 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը:

Պահուստային ֆոնդը ձևավորվում է Ընկերության կուտակված շահույթից հատկացումների հաշվին, չափը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ:

Վերագնահատման պահուստը ներառում է հողի և շենքերի վերագնահատումից օգուտները:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

## 4.15 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ամբողջությամբ ենթակա են մարման տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

### Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

### Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## 4.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են իրատեսական:

### 4.16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված նշանակալի դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

### Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյոք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

### 4.16.2 Գնահատման անորոշություն

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

### Իրական արժեքի չափումը

Ոչ ֆինանսական ակտիվների, ինչպիսիք են հողերը և շենքերը, վերագնահատված արժեքներով չափման դեպքում իրական արժեքները որոշվում են արտաքին գնահատողների կողմից իրականացված անկախ գնահատումներով: Այդ գնահատումները ներառում են էական ենթադրություններ, ներառյալ շուկայական տվյալների վրա հիմնված ելակետային պարամետրերը և գույքին բնորոշ առանձնահատկությունները:

Գնահատման մեթոդների, հիմնական ելակետային տվյալների և իրական արժեքի հիերարխիայի մակարդակների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 25.1-ում:

### Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից:

Մաշվող ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները վերանայվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները, ինչպես նաև համապատասխան կարևոր տեղեկությունները: Ղեկավարության համոզմամբ մաշվող ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե մաշվող ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

## 5 Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցումից հասույթ

Հասույթն առաջանում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումից, որոնք վերաբերում են պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքին:

## 6 Գովազդից և հովանավորչությունից հասույթ

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Հասույթ գովազդից | 718,524 | 711,793 |
| Հասույթ հովանավորչությունից | 114,205 | 46,116 |
| | **832,729** | **757,909** |

## 7 Այլ եկամուտներ

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտ | 414,570 | 299,485 |
| Ֆիլմերի ցուցադրումից և այլ առևտրային եկամուտ | 62,969 | 97,610 |
| Հեռարձակումից և վերահեռարձակումից եկամուտ | 6,155 | 14,471 |
| Այլ եկամուտ | 33,604 | 41,698 |
| | **517,298** | **453,264** |

Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտը գոյանում է երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի համաձայն ֆիլմերի նկարահանումներից, կնքված պայմանագրերի շրջանակներում տարաբնույթ ծրագրերի պատրաստումից, ինչպես նաև ընկերությունների գործունեության լուսաբանումից:

Այլ եկամուտները ճանաչվում են այն ժամանակի որևէ պահի, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ծառայությունը:

## 8 Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ձեռք բերված և պատրաստված ֆիլմերի և հաղորդումների արժեք | 1,492,786 | 1,525,338 |
| Ֆիլմերի և հաղորդումների օգտագործման իրավունքի ամորտիզացիա | 290,487 | 377,549 |
| Այլ | 261,781 | 160,387 |
| | **2,045,054** | **2,063,274** |

## 9 Հեռարձակման ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Արբանյակային հեռարձակում | 281,373 | 250,041 |
| Տեղական հեռարձակում | 120,000 | 100,250 |
| Ինտերնետային հեռարձակում | 55,042 | 48,453 |
| | **456,415** | **398,744** |

## 10 Այլ ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Գործակալական վճարներ | 72,932 | 70,729 |
| Գովազդային գործունեության հետ կապված ծախսեր | 78,398 | 72,169 |
| Տրանսպորտային ծախսեր | 48,524 | 50,426 |
| Կոմունալ ծառայություններ | 103,579 | 95,489 |
| Գործուղման ծախսեր | 53,237 | 47,811 |
| Ներկայացուցչական ծախսեր | 10,305 | 14,465 |
| Նորությունների և տեղեկատվության ձեռքբերում | 21,917 | 21,329 |
| Շենքերի ընթացիկ պահպանման ծախսեր | 32,079 | 22,431 |
| Հեռահաղորդակցության ծառայություններ | 18,479 | 22,384 |
| Արտադրական նյութեր և պահեստամասեր | 31,941 | 37,035 |
| Չփոխհատուցվող հարկեր | 16,657 | 12,431 |
| Գրասենյակային ծախսեր | 4,759 | 5,585 |
| «Առաջին ալիք Մեդիա ակադեմիա» հիմնադրամին նվիրաբերություն | 12,500 | 16,528 |
| Առողջության ապահովագրության ծախսեր | 46,727 | 45,207 |
| Այլ | 193,602 | 145,549 |
| | **745,636** | **679,568** |

## 11 Շահութահարկի գծով ծախս

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 63,975 | 34,197 |
| Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 17) | (34,470) | (33,359) |

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **29,505** | **838** |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| | 2025թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2024թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| **Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)** | (114,870) | | (221,550) | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%) | (20,677) | 18.00 | (39,879) | 18.00 |
| Չնվազեցվող ծախսեր, զուտ | 50,182 | (43.69) | 40,717 | (18.38) |
| **Շահութահարկի գծով ծախս** | **29,505** | **(25.69)** | **838** | **(0.38)** |

## 12 Հիմնական միջոցներ

| | Հող, շենքեր և շինություններ | Արտադրական և տնտեսական գույք, տրանսպորտային միջոցներ | Անավարտ շինարարություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք*** | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | **9,143,819** | **11,394,145** | **203,461** | **20,741,425** |
| Ավելացում | 3,816 | 307,792 | 601,645 | 913,253 |
| Օտարում | - | (60,748) | - | (60,748) |
| Ներքին շարժ | 361,103 | 478 | (361,581) | - |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **9,508,738** | **11,641,667** | **443,525** | **21,593,930** |
| Ավելացում | 200 | 315,505 | 306,366 | 622,071 |
| Օտարում | - | (48,527) | - | (48,527) |
| Ներքին շարժ | 14,372 | 8,597 | (22,969) | - |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **9,523,310** | **11,917,242** | **726,922** | **22,167,474** |
| ***Կուտակված մաշվածություն և արժեզրկում*** | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | **413,010** | **9,266,078** | **-** | **9,679,088** |
| Տարվա հաշվարկ | 155,331 | 897,647 | - | 1,052,978 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | | (59,068) | - | (59,068) |
| Արժեզրկումից կորուստ | - | 6,275 | - | 6,275 |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **568,341** | **10,110,932** | **-** | **10,679,273** |
| Տարվա հաշվարկ | 164,185 | 737,567 | - | 901,752 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | - | (39,208) | - | (39,208) |

| | Հող, շենքեր և շինություններ | Արտադրական և տնտեսական գույք, տրանսպորտային միջոցներ | Անավարտ շինարա-ություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Արժեզրկումից կորուստի հակադարձում | - | (6,275) | - | (6,275) |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **732,526** | **10,803,016** | **-** | **11,535,542** |
| | | | | |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **8,940,397** | **1,530,735** | **443,525** | **10,914,657** |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **8,790,784** | **1,114,226** | **726,922** | **10,631,932** |

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Խմբի հողերը և շենքերը վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողի կողմից 2023թ. հունվարի 1-ի դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզած ձեռքի հեռավորության» պայմանով: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Եթե հողը և շենքերը ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվերի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները համապատասխանաբար կկազմեին 115,110 հազար ՀՀ դրամ և 1,101,056 հազար ՀՀ դրամ:

Մաշվածության գծով ծախերսը բաշխվել են շահույթին կամ վնասին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,882,413 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,506,790 հազար ՀՀ դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Ակտիվներին վերաբերվող շնորհները ներառում են տարբեր տարիների ընթացքում Ընկերությանը տրված պետական և այլ շնորհների միջոցով ձեռք բերված հիմնական միջոցներ:

## 13 Ոչ նյութական ակտիվներ

| | Համակարգչային ծրագրեր | Ֆիլմեր, լիցենզիաներ, սցենարներ, ապրան-քային նշաններ և այլ ոչ նյութական ակտիվներ | Անավարտ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | **104,041** | **1,103,655** | **45,531** | **1,253,227** |
| Ավելացում | 25,640 | 313,095 | 1,225 | 339,960 |
| Օտարում | (50,223) | (245,205) | (80) | (295,508) |
| Ներքին շարժ | 8,030 | 29,558 | (37,588) | - |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **87,488** | **1,201,103** | **9,088** | **1,297,679** |
| Ավելացում | 21,456 | 184,511 | 68,134 | 274,101 |
| Օտարում | (1,954) | (207,590) | (4,087) | (213,631) |
| Ներքին շարժ | 554 | 67,520 | (68,074) | - |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **107,544** | **1,245,544** | **5,061** | **1,358,149** |

| | Համակարգչային ծրագրեր | Ֆիլմեր, լիցենզիաներ, սցենարներ, ապրանքային նշաններ և այլ ոչ նյութական ակտիվներ | Անավարտ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Կուտակված ամորտիզացիա*** | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | **91,737** | **590,837** | **-** | **682,574** |
| Տարվա հաշվարկ | 27,981 | 375,405 | - | 403,386 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | (50,223) | (245,205) | - | (295,428) |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **69,495** | **721,037** | **-** | **790,532** |
| Տարվա հաշվարկ | 29,530 | 286,319 | - | 315,849 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | (1,954) | (207,590) | - | (209,544) |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **97,071** | **799,766** | **-** | **896,837** |
| | | | | |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **17,993** | **480,066** | **9,088** | **507,147** |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **10,473** | **445,778** | **5,061** | **461,312** |

Ամորտիզացիայի ծախսերը բաշխվել են շահույթի կամ վնասին:

## 14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 457,644 | 496,121 |
| Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստ | (8,340) | - |
| | **449,304** | **496,121** |
| ***Ոչ ֆինանսական ակտիվներ*** | | |
| Պետական բուջեի գծով դեբիտորական պարտքեր և այլ կանխավճարներ | 57,398 | 71,293 |
| | **57,398** | **71,293** |
| | **506,702** | **567,414** |

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի համադրումը ներկայացված է ստորև.

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ | - | - |
| Տարվա ընթացքում պահուստի ճանաչում | 8,340 | - |

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| **Կորուստների գծով պահուստը, տարեվերջի մնացորդ** | **8,340** | **-** |

Ծանոթագրություն 23.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 23.1-ը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

# 15 Սեփական կապիտալ

## 15.1 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմում է 2,391,107 ՀՀ դրամ: Այն բաժանված է 15,940,712 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 150 դրամ անվանական արժեքով:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Խմբի միակ բաժնետերը: Խմբի բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկին:

## 15.2 Պահուստային ֆոնդ

Պահուստային ֆոնդին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ: 2025 թ. պահուստային ֆոնդի համալրում չի եղել, համաձայն «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի 2024թ. հունիսի 27-ի N49-Լ որոշման՝ Խմբի պահուստային ֆոնդը 2024թ. համալրվել է 6,000 հազար ՀՀ դրամի չափով:

Պահուստի ձևավորումը և չափը կարգավորվում են Ընկերության կանոնադրությամբ և այն պետք է կազմի բաժնետիրական կապիտալի առնվազն 15 տոկոսը:

## 15.3 Շահաբաժիններ

2025թ. շահաբաժինների վճարում տեղի չի ունեցել, իսկ 2024թ. վճարվել է 270,858 հազար ՀՀ դրամ:

# 16 Ակտիվներին վերաբերող շնորհներ

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 1,469,226 | 1,341,540 |
| Ավելացում | 351,263 | 528,256 |
| Եկամտի ճանաչում | (258,572) | (400,570) |
| **Տարեվերջի մնացորդ** | **1,561,917** | **1,469,226** |

# 17 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | (1,055,009) | (1,088,368) |
| Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 11) | 34,470 | 33,359 |
| **Տարեվերջի մնացորդ** | **(1,020,539)** | **(1,055,009)** |

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| | 1 հունվարի 2025թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2025թ. |
|---|---|---|---|
| ***Հետաձգված հարկային ակտիվներ*** | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 47,094 | 431 | 47,525 |
| Շնորհներ | 8,039 | (3,517) | 4,522 |
| | **55,133** | **(3,086)** | **52,047** |
| ***Հետաձգված հարկային պարտավորություններ*** | | | |
| Հիմնական միջոցներ | 1,109,621 | (37,035) | 1,072,586 |
| Ոչ նյութական ակտիվներ | 521 | (521) | - |
| | **1,110,142** | **(37,556)** | **1,072,586** |
| **Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ** | **(1,055,009)** | **34,470** | **(1,020,539)** |

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| | 1 հունվարի 2024թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| ***Հետաձգված հարկային ակտիվներ*** | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 45,103 | 1,991 | 47,094 |
| Շնորհներ | 10,608 | (2,569) | 8,039 |
| | **55,711** | **(578)** | **55,133** |
| ***Հետաձգված հարկային պարտավորություններ*** | | | |
| Հիմնական միջոցներ | 1,143,466 | (33,845) | 1,109,621 |
| Ոչ նյութական ակտիվներ | 613 | (92) | 521 |
| | **1,144,079** | **(33,937)** | **1,110,142** |
| **Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ** | **(1,088,368)** | **33,359** | **(1,055,009)** |

## 18 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 445,488 | 457,006 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին | 269,018 | 263,497 |
| Այլ | 38 | - |
| | **714,544** | **720,503** |
| ***Ոչ ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Հաճախորդներից կանխավճարներ | 44,465 | 18,323 |
| Վճարվելիք հարկեր և պարտավորություններ | 273,836 | 123,964 |
| | **318,301** | **142,287** |

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| **Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր** | **1,032,845** | **862,790** |

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 23.1-ում:

## 19 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի 50% սեփական կապիտալի բաժնեմասեր «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ-ում: «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ-ն գրանցված է Հայաստանում և նրա հիմնական գործունեությունը գովազդային գործակալական ծառայություններ մատուցում է:

Ներդրման գումարը չի ներկայացվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ Խմբի ղեկավարության գնահատականով հաշվետու ամսաթվի դրությամբ այն մոտ էր զրոյին:

Խմբի ասոցիացված կազմակերպության մասին ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| Ընդամենն ակտիվներ | 344,255 | 690,814 |
| Ընդամենը պարտավորություններ | (439,517) | (764,406) |
| **Զուտ պարտավորություններ** | **(95,262)** | **(73,592)** |

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ընդամենը հասույթ | 700,997 | 829,682 |
| Ընդամենը տարվա վնաս | (22,078) | (15,814) |

## 20 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են լիազորված կառավարչին՝ «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկ, ստորև նշված ընկերությունները, որոնք Խմբի հետ միասին գտնվում են «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի կառավարման ներքո, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը.

- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ,
- «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ:

Կապակցված կողմեր են նաև Խմբի ասոցիացված կազմակերպությունը՝ «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ, Խմբի կողմից հիմնադրված «Առաջին ալիքի Մեդիա ակադեմիա» հիմնադրամը և «Հեռուստաընտանիք» բարեգործական հիմնադրամը:

Խումբն իր մատուցած ծառայությունների դիմաց գումարները ստանում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկից:

### 20.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի կողմից:

### 20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| ***«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ*** | | |
| Ծառայությունների մատուցում | 5,474,598 | 5,330,785 |
| | | |
| ***Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ*** | | |
| Ստացված ծառայություններ | - | 75 |
| | | |
| ***Ասոցիացված կազմակերպություններ*** | | |
| Ստացված ծառայություններ | 398,520 | 388,539 |
| Տրամադրված նվիրաբերություն | 12,500 | 16,528 |
| | | |
| ***Հիմնական ղեկավար անձնակազմ*** | | |
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 254,971 | 221,434 |

## 21 Պայմանականություններ

### 21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

# 22 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

## Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

### Ֆինանսական ակտիվներ

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*** | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 449,304 | 496,121 |
| Մնացորդներ բանկերում | 564,312 | 259,366 |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | **1,013,616** | **755,487** |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,013,616** | **755,487** |

### Ֆինանսական պարտավորություններ

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 714,544 | 720,503 |
| Վարկեր | - | 150,356 |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ** | **714,544** | **870,859** |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **714,544** | **870,859** |

Խմբի ֆինանսական գործիքների ռիսկերի նկարագրությունը՝ ներառյալ ռիսկի կառավարման նպատակները և քաղաքականությունը, արտացոլված են Ծանոթագրություն 23-ում:

# 23 Ֆինանսական գործիքների ռիսկ

## Ռիսկի կառավարման քաղաքականությունը և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

## 23.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

## Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

| 31 դեկտեմբերի 2025թ. | ԱՄՆ դոլար | Եվրո | Այլ |
|---|---|---|---|
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8,803 | 8,004 | 1,683 |
| Մնացորդներ բանկերում | 3,524 | 15 | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **12,327** | **8,019** | **1,683** |
| | | | |
| ***Ֆինանսական պարտավորություններ*** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 32,960 | 16,936 | 3,475 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **32,960** | **16,936** | **3,475** |
| | | | |
| **Զուտ արդյունք** | **(20,633)** | **(8,917)** | **(1,792)** |

Հոդված

| 31 դեկտեմբերի 2024թ. | ԱՄՆ դոլար | Եվրո | Այլ |
|---|---|---|---|
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 33,605 | 6,993 | 3,571 |
| Մնացորդներ բանկերում | 7,553 | - | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **41,158** | **6,993** | **3,571** |
| | | | |
| ***Ֆինանսական պարտավորություններ*** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 57,800 | 41,558 | 2,249 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **57,800** | **41,558** | **2,249** |
| | | | |
| **Զուտ արդյունք** | **(16,642)** | **(34,566)** | **1,322** |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ փոխարժեքների նկատմամբ դրամի 5% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 5%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 5%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

| | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|---|---|
| | 2025թ. | 2024թ. | 2025թ. | 2024թ. |
| Շահույթ կամ վնաս | 1,032 | 1,664 | 446 | 3,457 |

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

## 23.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Խմբի ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*** | | |
| Մնացորդներ բանկերում | 564,312 | 259,366 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 449,304 | 496,121 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,013,616** | **755,487** |

### Բանկային մնացորդներ

Բանկային մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է գումարները բարձր վարկանիշ ունեցող տարբեր բանկերում պահելու միջոցով:

Ստորև ներկայացված աղյուսակում բացահայտված են ֆինանսական հաստատությունների մնացորդների վարկային հուսալիությունը՝ հիմնված պարտքային ռիսկի մակարդակների վրա:

| S&P միջազգային վարկանիշներ | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| BB- | 564,312 | 259,366 |
| **Ընդամենը** | **564,312** | **259,366** |

Բանկային մնացորդները և դեբիտորական պարտքերը ոչ ժամկետանց են, ոչ էլ արժեզրկված, և ակնկալվող պարտքային կորուստը համարվում է աննշան:

## 23.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

| 2025թ. | Անտոկոս | Ընդամենը |
|---|---|---|
| ***Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)*** | | |
| Մինչև 6 ամիս | 445,488 | 445,488 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 269,018 | 269,018 |
| | **714,544** | **714,544** |

| 2024թ. | Անտոկոս | Գործիքներ հաստատուն տոկոսա-դրույքով | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)** | | **11%** | |
| Մինչև 6 ամիս | 457,006 | - | 457,006 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 263,497 | 62,856 | 326,353 |
| 1-5 տարի | - | 87,500 | 87,500 |
| | **720,503** | **150,356** | **870,859** |

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 տարվա ընթացքում:

# 24 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## 24.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր:

Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

### Հող և շենքեր

Իրական արժեքը որոշվել է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ պայմաններով անշարժ գույքի համար հայտարարված վաճառքի գների հիման վրա, կիրառելով 0.6-ից 1.2 տիրույթում ընկած գործակիցներ՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից տարբերությունների (առկայության դեպքում) հետ կապված ելակետային գները ճշգրտելու համար: Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):

## 25 Կապիտալի ռիսկի քաղաքականություն և ընթացակարգեր

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ):

Խումբը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

| | 31 դեկտեմբերի 2025թ. | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|
| ***Զուտ պարտք*** | | |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 8,648,344 | 8,792,719 |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (564,312) | (259,366) |
| | **8,084,032** | **8,533,353** |
| ***Ճշգրտված սեփական կապիտալ*** | | |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 8,648,344 | 8,792,719 |
| Վարկեր | - | 150,356 |
| | **8,648,344** | **8,943,075** |
| | | |
| **Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից** | **0.93** | **0.95** |